



**ՆԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՎՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

24 սեպտեմբերի 2012թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով «Ն.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Յ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
«Ն.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ն եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանը 03.09.2012թ. դիմել են ՆՏ
սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Պարզեցված
հարկի մասին» ՆՏ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համապատասխանու-
թյունը ՆՏ Սահմանադրության 1-ին, 83.5-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերի, 8-րդ հոդվածի,
14.1-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, 33.1-րդ հոդվածի 1-ին մասի եւ 43-րդ
հոդվածի պահանջներին:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՏՏ սահմանադրական դատարանի դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՏՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Ն.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանի դիմումի հիման վրա՝ «Պարզեցված հարկի մասին» ՏՏ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պարասխանող կողմ ներգրավել ՏՏ Ազգային ժողովին:

Նախագահող
Անդամներ



24 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-17